https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-73

ԱՂԱՎՆԻ ՄԱԴՈՅԱՆ
ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

AGHAVNI MADOYAN
Senior Prosecutor of the Central Military Prosecutor's Office of the Republic of Armenia,
Third Class Counsellor of Justice, Degree Applicant of the
Department of Civil Procedure of the Faculty of Law of Yerevan State University

АГАВНИ МАДОЯН
Старший прокурор Центральной военной прокуратуры Республики Армения,
советник юстиции 3-го класса, соискатель кафедры гражданского судопроизводства
юридического факультета Ереванского государственного университета
https://orcid.org/0009-0003-0443-3567

ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

CIVIL PROCEDURE ISSUES OF FORMULATING STATE INTEREST IN THE LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

ГРАЖДАНСКО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ИНТЕРЕСА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ներածություն

Ժամանակակից իրավական համակարգերում առանձնահատուկ նշանակություն ունի օրենքով պաշտպանվող շահերի արդյունավետ դատական պաշտպանությունը, որի շրջանակներում ինքնուրույն տեղ է զբաղեցնում պետական շահի պաշտպանությունը: Պետական շահի առանձնահատկությունը պայմանավորված է դրա բովանդակության բազմաշերտությամբ և հանրային ու մասնավոր շահերի հետ սերտ հարաբերակցությամբ: Այս հանգամանքը քաղաքացիական դատավարությունում առանձնակի կարևորություն է հաղորդում պետական շահի իրավական բովանդակության որոշակիացմանը և դրա դատական պաշտպանության առանձնահատկությունների բացահայտմանը:

Հիմնական հետազոտություն

Քաղաքացիական դատավարությունում շահը հիմնարար կատեգորիա է, որը ձևավորում է դատական պաշտպանության մեխանիզմների կիրառման հիմքը: Օրենքով պաշտպանվող շահը համարվում է այն առանցքը, որի շուրջ կառուցվում են քաղաքացիական գործերը: Այն ընկալվում է որպես անձի իրավաչափ պահանջ՝ պաշտպանելու իր սուբյեկտիվ իրավունքները կամ օրինական հետաքրքրությունները:

Ընդ որում, քաղաքացիադատավարական իմաստով շահը չի կարող գնահատվել միայն որպես անձի սուբյեկտիվ հետաքրքրություն: Շահը պետք է լինի իրավական, այսինքն՝ դրա բովանդակությունը, սահմանները և պաշտպանության ենթակա լինելու հանգամանքը պետք է հնարավոր լինի որոշել գործող իրավանորմերի հիման վրա: Այլ կերպ ասած՝ շահը իրավական է այնքանով, որքանով այն հնարավոր է բացահայտել, հիմնավորել և գնահատել իրավակարգավորումների շրջանակում:

Շահը սոցիոլոգիական և իրավաբանական հիմնարար հասկացություններից է, որը բացահայտում է օբյեկտիվ օրինաչափությունների և մարդկային գործողությունների կապը: Շահերն ուղղորդում են սուբյեկտի գործողությունները, ձևավորում նրա շարժառիթները և սոցիալական վարքը[1]:

Պ.Վ. Անոխինի կարծիքով՝ սոցիալական երևույթներին վերաբերող «շահ» տերմինը կարելի է մեկնաբանել որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտների կարիքներ և պահանջներ[2]: Սակայն, քանի որ հասարակական հարաբերությունների սուբյեկտներ կարող են հանդես գալ ոչ միայն անհատները, այլ նաև սոցիալական խմբերը (սոցիալական կազմակերպություններ, սոցիալական համայնքներ և այլն), կամ հանրությունը, առաջանում է մասնավոր և հասարակության շահերի համեմատության խնդիր: Եվ այս խնդիրը հասարակական գիտությունների ամենակարևոր խնդիրներից մեկն է, քանի որ դրա մեկնաբանությունից մեծապես կախված է ընդհանուր կոնցեպցիայի ուղղվածությունը:

Այս առումով կարևոր է հասկանալ, թե ինչ նշանակություն ունի շահը հասարակական հարաբերությունների զարգացման գործընթացում: Պետք է փաստենք, որ հենց շահերի համադրման, գնահատման միջոցով են լուծվում հանրային և մասնավոր բնույթի բոլոր խնդիրները:

Հասարակական հարաբերությունների զարգացման պայմաններում շահը՝ որպես իրավաբանական կատեգորիա, ստացել է առավել կարևոր նշանակություն, քանի որ հասարակության մեջ մշտապես առկա են շահերի բախման վտանգներ, որի պայմաններում շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում համակողմանի ուսումնասիրել և գնահատել բախվող շահերից որին է պատկանում առաջնահերթությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադառնալով շահի բովանդակությանն ու դասակարգմանը՝ ամրագրելով, որ իրավունքում «շահ» հասկացությունը թեև դասակարգվում է հանրայինի և մասնավորի, սակայն դա խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու հա-

[1] *Мусаев Н.М.,* Понятие интереса, его виды и соотношение публичного и частного интереса, «Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского. Серия: Право», 2000. № 1. С. 137–142.

[2] *Анохин П.В.,* Государственные интересы и права человека: соотношение и приоритеты: Автореф. дисс. ... канд. юрид. наук. СПб., 2001. С.11.

մար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար[3]:

Ընդունելով Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ շահը հանրային համարելու համար պարտադիր չէ, որպեսզի այն լինի հասկանալի կամ ընդունելի հասարակության բոլոր անդամների կողմից, այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, որ հանրային շահի սուբյեկտային չափանիշի էությունը պայմանավորված է այն գաղափարով, որ դրա կրողները անհատականացվող չեն: Հանրային շահը, իր էությամբ, պատկանում է հանրության անորոշ, չանհատականացվող շրջանակին, այսինքն շահը հանրային որակելու համար այն պետք է ունենա հանրային բնույթ: Միաժամանակ, հանրային շահի սուբյեկտային չափանիշի մեկնաբանության շրջանակներում անհրաժեշտ է հստակ տարանջատել շահի բնույթը և դրա նշանակությունը: Այս առումով, այն հանգամանքը, որ որոշակի շահը կարող է ունենալ հանրային նշանակություն, ինքնին դեռևս բավարար չէ այն հանրային շահ որակելու համար: Հնարավոր են իրավիճակներ, երբ մասնավոր շահը, պահպանելով իր մասնավոր բնույթը, միաժամանակ ծառայի հանրային պահանջմունքների բավարարմանը: Օրինակ՝ մասնավոր անձի կողմից հանրային կարիքի համար արտադրության կազմակերպումը կամ հանրային ծառայությունների մատուցումը մի կողմից արտահայտում է տվյալ անձի տնտեսական կամ այլ մասնավոր շահը, քանի որ ուղղված է շահույթի կամ այլ օգուտի ստացմանը, իսկ մյուս կողմից՝ նպաստում է հասարակության որոշակի պահանջմունքների բավարարմանը և այդ իմաստով ձեռք է բերում հանրային նշանակություն: Սակայն նման դեպքերում շահի բնույթը չի փոխվում և շարունակում է մնալ մասնավոր, քանի որ դրա առաջնային կրողը և շահառուն կոնկրետ անհատն է կամ անհատների որոշակի շրջանակը:

Հետևաբար, պետք է տարանջատել շահի հանրային նշանակությունը և հանրային բնույթը՝ որպես առանձին կատեգորիաներ: Շահը հանրային որակելու համար անհրաժեշտ է, որ այն ոչ միայն առնչվի հասարակության որոշակի պահանջմունքների բավարարմանը, այլև իր էությամբ պատկանի հասարակության անորոշ, չանհատականացվող շրջանակին և ուղղված լինի համընդհանուր բարիքների պահպանմանն ու զարգացմանը: Հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել հանրային և մասնավոր շահերի նույնացման կամ շփոթության, ինչը տեսական և գործնական առումով կարող է դժվարություններ առաջացնել հատկապես հանրային շահի դատավարական պաշտպանության շրջանակների որոշման հարցում:

Անդրադառնանք պետական շահին, որի իրավաբանական բնույթի և քաղաքացիադատավարական պաշտպանության մեխանիզմների բացահայտումը հանդիսանում է սույն գիտական հոդվածի հետազոտության առարկան:

Պետության շահը՝ որպես հանրային իրավունքում ինքնուրույն կազմակերպական ձև կրողի, և անհատի շահերը՝ որպես ինքնուրույն սուբյեկտի, չեն կարող ամբողջությամբ համընկնել, ինչն իրավական առումով հանդես է գալիս որպես պետության ինքնիշխանության և անհատի ինքնուրույնության հակասություն: Այլ կերպ ասած՝ պետական շահն ընդգծում է հանրության շահերը՝ ի հակադրություն անհատական շահերին:

Ցանկացած իրավական պետության կենսագործունեության անհրաժեշտ պայմանն է

[3] Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով որոշումը:

հանրային և մասնավոր շահերի՝ որպես սահմանադրորեն պաշտպանվող արժեքների արդարացի հավասարակշռության որոնումը, քանզի առանց բավարար հիմքի դրանցից յուրաքանչյուրին նախապատվություն տալը կարող է հանգեցնել մարդու հիմնարար իրավունքների խախտման կամ այնպիսի կամայականությունների, որը կարող է վտանգել պետության կայունությունն ու անվտանգությունը:

Երբ կոլիզիա է առաջանում սահմանադրորեն պաշտպանված երկու իրավական արժեքների միջև, ապա դրանցից մեկը չպիտի միակողմանիորեն առավելություն ստանա և իրականացվի մյուսի հաշվին: Հակառակը, երկուսն էլ պետք է սահմանափակվեն, բայց և այնպես, որ երկուսն էլ կարողանան հնարավորինս առավելագույն չափով դրսևորվել:[4] Ընդ որում, խոսքը ոչ թե իրավական բարիքների վերացական համադրման, այլ մի կոնկրետ դեպքում դրանց համաձայնեցման մասին է[5]:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «պետական շահ» տերմինը օգտագործվում է միայն 176-րդ հոդվածի 3-րդ մասում, որպես պետական շահի պաշտպանության հայց հարուցելու դատախազական գործառույթ:

Մինչդեռ հանրային շահի կամ պետական անվտանգության գերակայությամբ պայմանավորված՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է մի շարք հիմնարար իրավունքների սահմանափակում:

Այսպես, Սահմանադրության 47-րդ հոդվածի 7-րդ մասը այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով նախատեսում է քաղաքացիության իրավունքի սահմանափակման հնարավորություն, 51-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային շահի գերակայությամբ պայմանավորված՝ սահմանափակում է նախատեսում նաև տեղեկություններ ստանալու իրավունքի համար, 59-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային շահերի պաշտպանության նպատակով սահմանափակման հնարավորություն է նախատեսում տնտեսական մրցակցության, իսկ 60-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով՝ հանրային շահի գերակայությամբ պայմանավորված, նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն:

Նշվածից բխում է, որ Սահմանադրությամբ հիմնարար իրավունքների սահմանափակումները պայմանավորված են ոչ թե պետական շահի, այլ հանրային շահի գերակայությամբ, դրանով պայմանավորված՝ սահմանադրահիրավական տեսանկյունից «պետական շահ» հասկացությունը մեկնաբանվում է առավել լայն՝ «հանրային շահ» հասկացության համատեքստում:

Լ.Ա. Մորոզովայի կարծիքով՝ այս ձևակերպումից հետևում է, որ պետական շահերը գերակայում են մասնավորի և նույնիսկ հանրայինի՝ այսինքն՝ հասարակության շահերի նկատմամբ: Սա որոշակիորեն պետության տոտալիտար անցյալի արձագանքն է[6]:

Յու. Ա. Տիխոմիրովը հանրային շահը սահմանում է որպես «պետության կողմից պաշտոնապես ճանաչված և իրավունքի միջոցով երաշխավորված շահ, որի բավարարումն ապահովում է հասարակության գոյության և զարգացման առաջնային պայմանը»[7]:

Հետագայում Յու. Ա. Տիխոմիրովը նույնացնում է պետական և հանրային (հասարակական) շահերը՝ նշելով, որ հանրային շահի իրավական ապահովման մեթոդներից մեկը պետա-

[4] Տես Shu BVerfGE 28, 243 (261); 93, 1 (21); von Coelln, in: Gröpl/Windthorst/von Coelln (Hrsg.), Studien- kommentar GG, 2017, Vorbemerkung zu den Grundrechten, Rn. 87; Maurer, Staatsrecht 1, 2010, §1 Rn. 62; Manssen, Staatsrecht II - Grundrechte, «2019, Rn. 166.

[5] Տես Sachs, in: ders. (Hrsg), Grundgesetz, 2011, Einfluhrung Rn. 50.

[6] *Морозова Л.А.,* Проблемы современной российской государственности. М.: Юрид. лит., 1998. С. 87-93.

[7] См.: *Тихомиров Ю.А.,* Публичное право: падение и взлеты // Государство и право. 1996. №1. С.5.

կան շահի առաջնահերթությունն է:

Հայաստանի իրավական համակարգում պետական շահին անորոշ իրավական հասկացություն է, որն, ըստ անհրաժեշտության, ունի մեկնաբանման ու կոնկրետացման կարիք: Ընդհանուր առմամբ՝ օրենսդրի հայեցողությանն է թողնված օրենքներում անորոշ իրավական հասկացությունների գործածության հարցը:

Մեկնաբանման կարիք ունեցող անորոշ իրավական հասկացությունները սովորաբար անհրաժեշտ են հասարակական կյանքի բազմազանությունը հնարավորինս քիչ իրավակարգավորումներով ընդգրկելու համար: Ընդ որում, անորոշ իրավական հասկացություններ պարունակող իրավանորմեր կիրառելիս իրավակիրառողը չի կարող սահմանափակվել նորմի դասական մեկնաբանմամբ: Օրենսդիրը նրան ավելի շուտ լիազորում է անձամբ հստակ սահմանել ու գնահատողական որոշում ընդունել՝ նկատի ունենալով կոնկրետ դեպքի առանձնահատուկ հանգամանքները: Այստեղ իրավակիրառողը՝ իբրև մեկնաբանող, կարող է միայն փորձել բացահայտել նորմի գաղափարական իմաստը սովորաբար իրականության մեջ պարբերաբար հանդիպող դեպքերի հիման վրա, որպեսզի արժեքային մասշտաբներ արտածի համանման դեպքերի գնահատման համար: Այդ պատճառով անորոշ իրավական հասկացությունների դեպքում տեղին է մեկնաբանման այլ տիպի մոտեցումը՝ որոշակիացումը[8]:

Իրավաբանական մեթոդաբանության մեջ մշակված այս կանոնները հուշում են, որ պետական շահի նախապայմանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հնարավոր է բացահայտել միայն համապատասխան օրենսդրական **կարգավորման իմաստի ու նպատակի ընդհանուր տրամաբանությունից ելնելով[9]:** Ասվածն իր հերթին նշանակում է, որ չի կարող գոյություն ունենալ «պետական շահ» հասկացության համակողմանի (ունիվերսալ) մեկնաբանություն: Պետական շահը իրավական հասկացություն է, որը դժվար է արտահայտել քանակականորեն ու ներկայացնում է բազմաթիվ հակադիր ուղղությունների ամբողջություն, ինչն իր հերթին մեծ հայեցողական ազատություն է տալիս իրավակիրառողին օրենքը կիրառելիս[10]:

Այն հարցը, թե երբ է առկա պետական շահ, որի պաշտպանության նպատակով հայց հարուցելու անհրաժեշտություն կա, ամբողջությամբ կախված է կոնկրետ դեպքի հանգամանքներից, և յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշվի դրա օգտին կամ դրա դեմ խոսող տեսանկյունների համադրմամբ:[11] «Պետական շահ» հասկացության մեկնաբանումն ու որոշակիացումը բարդանում է նաև այն պատճառով, որ պետական շահի պաշտպանությունը միշտ ենթադրում է միմյանց հետ հավասարակշռման ենթակա հակադիր շահերի՝ կոնկրետ իրավատիրոջ, հանրության կամ պետության շահերի գնահատում, և այդ գնահատականն անընդհատ փոփոխվում է հասարակության մեջ փոփոխվող հայացքներին զուգահեռ:[12]

Որքան էլ «պետական շահ» հասկացությունն անորոշ է, այդուհանդերձ դրա ստուգաբանությունից, միջազգային փաստաթղթերում պետական շահի վերաբերյալ ամրագրված սկզբունքներից կարելի է բխեցնել հասկացության տարաբնույթ ընդհանրական սահմանումներ:

Այսպես, ներպետական օրենսդրությունն ամրագրում է պետության սեփականության իրավունքը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի

[8] Տես Գ. *Հովհաննիսյան,* Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, 2020, էջ 323-324:
[9] Տես Weber, Rechtswörterbuch, 30. Edition 2023, բառահոդված «Öffentliches Interesse»:
[10] Տես KK-StPO/Diemer, 9. Aufl. 2023, StPO § 153a Rn. 12:
[11] Տես BGHZ 131, 247, 254; Benkard PatG/Kober-Dehm, 12. Aufl. 2023, PatG § 24 Rn. 15:
[12] Տես BGHZ 131, 247, 251; տես նաև BPatGE 32, 184, 189:

166-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը ճանաչվում է որպես սեփականության իրավունքի սուբյեկտ, իսկ դրա 3-րդ մասով սահմանվում է, որ օրենքները կարող են նախատեսել գույքի այն տեսակները, որոնք կարող են պատկանել միայն պետությանը կամ համայնքներին: Նույն օրենսգրքի 168-րդ հոդվածը սահմանում է պետության սեփականության իրավունքը՝ ընդգծելով, որ պետության սեփականությունը ներառում է նրան պատկանող գույքը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողային և բնական պաշարները, ինչպես նաև պետական բյուջեի միջոցները: Այս իրավական նորմերը համակարգային ձևով արտացոլում են պետության գույքային շահի հիմքերը՝ ընդգծելով դրանց դերը ինչպես գույքի կառավարման, այնպես էլ հանրային շահերի պաշտպանության համատեքստում: Այսինքն, կարելի է փաստել, որ պետական սեփականությունը դիտարկվում է որպես հանրային իշխանության գործառույթների իրականացման նախադրյալ:

Պետության գույքային շահը ներառում է ոչ միայն գույքի պահպանման և տնօրինման իրավունք, այլև դրա օգտագործման նպատակահարմարության ապահովումը՝ ելնելով հանրային շահից: Այս առումով, պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքը չի հանդիսանում զուտ քաղաքացիաիրավական ինստիտուտ, այլ ունի հանրային իրավունքի բաղադրիչ, ինչը պայմանավորված է պետության սոցիալական, տնտեսական և ռազմավարական գործառույթներով:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պետական գույքի կարգավորման առանձնահատկությունը պայմանավորված է նաև դրա օգտագործման սահմանափակումներով, որոնք բխում են հանրային շահի գերակայության սկզբունքից: Օրինակ, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է հողի տնօրինման իրավական ռեժիմ, որը մի կողմից ապահովում է հողի նպատակային օգտագործումը, իսկ մյուս կողմից սահմանում է սահմանափակումներ, որոնք ուղղված են պետական և հանրային շահերի պաշտպանությանը՝ հիմնվելով բնապահպանական, սոցիալ-տնտեսական և մշակութային նկատառումների վրա: Այս սահմանափակումները պետության գույքային շահի պաշտպանության մեխանիզմներ են, որոնք ապահովում են հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը և հանրային գերակա շահերի առաջնահերթությունը մասնավոր շահերի նկատմամբ: Հողային օրենսդրությամբ հստակ սահմանվում են այն հողային կատեգորիաները, որոնք ենթակա չեն մասնավորեցման: Պետական սեփականության այդ սահմանափակումները միտված են պահպանել ազգային ժառանգությունը, բխում են էկոհամակարգերի կայունության և հանրային առողջապահական շահերի պաշտպանության առաջնահերթությունից, կարգավորում են ռազմավարական ենթակառուցվածքների անվտանգությունը և բնական ռեսուրսների կայուն օգտագործումը՝ բացառելով հողի ոչ նպատակային և անկանոն շահագործումը (ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդված): Այս իրավական սահմանափակումները արտահայտում են հանրային շահի գերակայությունը, ինչի շնորհիվ կանխվում է հողային ռեսուրսների ոչ նպատակային տնօրինումը և ապահովվում է դրանց պաշտպանվածությունը պետության կողմից, միաժամանակ բացառություն են կազմում համայնքներին փոխանցման դեպքերը, քանի որ համայնքները, հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմիններ, կրկին ապահովում են հողի կառավարումն ու օգտագործումը հանրային շահերի համատեքստում: Այսինքն, պետության գույքային շահը ընդգրկում է պետական սեփականությունը, որը ոչ միայն արտացոլում է պետության տնտեսական ներուժը, այլև ծառայում է նրա սահմանադրական գործառույթների իրականացմանը:

Այս տեսանկյունից առավել մեծ կարևորություն է ստանում պետական շահի դատական պաշտպանության ինստիտուտը, որն ուղղված է ոչ միայն իրավախախտումներից բխող

վնասների վերականգնմանը, այլև պետության՝ որպես համընդհանուր շահերի ներկայացուցչի դիրքի ամրապնդմանը: Պետական շահերի պաշտպանության գործերով հայց հարուցելու իրավասության հարցը ունի առանցքային նշանակություն, հետևաբար, հայց հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտի պարզումը քաղաքացիադատավարական պաշտպանության արդյունավետ իրականացման կարևորագույն պայմաններից է: ՀՀ իրավական համակարգում առկա կարգավորումները այս հարցում չեն ապահովում բավարար հստակություն և կանխատեսելիություն, ինչը հանգեցնում է ոչ միատեսակ դատական պրակտիկայի ձևավորմանը:

Եզրակացություն (conclusion, заключение).

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ պետական շահը կարելի է բնորոշել որպես պետության կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ գույքային և ոչ գույքային արժեքների համակցություն, որն ընդգրկում է պետության տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և իրավական շահերը:

Գույքային պետական շահն արտահայտվում է պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանման, տնօրինման և արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ:

Ոչ գույքային պետական շահը ներառում է հանրային կարգի, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանությունը, պետության հեղինակության պաշտպանությունը, ինչպես նաև այլ հիմնարար շահեր, որոնք անմիջականորեն չեն արտահայտվում նյութական կամ գույքային արժեքով, սակայն էական նշանակություն ունեն հասարակության բնականոն կենսագործունեության և իրավական պետության հիմքերի ապահովման համար:

Քաղաքացիադատավարական օրենսդրության տեսանկյունից նշված շահերի դատական պաշտպանությունը հնարավոր է այն դեպքերում, երբ իրավախախտմամբ վնասվել կամ անմիջականորեն վտանգվել է պետական շահի որևէ արժեքային բաղադրիչ, և դրա պաշտպանությունը կամ վերականգնումը ենթադրում է դատական պաշտպանության միջոցների կիրառում: Նման հայցեր կարող են ներկայացվել լիազորված պետական մարմինների կողմից՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում՝ դրանց իրականացման համար նախատեսված պայմանների պահպանմամբ:

Միաժամանակ, պետական շահի իրավաբանական բնույթի և դրա քաղաքացիադատավարական պաշտպանության հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական շահի պաշտպանությունն իրավական բարդ և բազմաշերտ գործընթաց է: Պետական շահը, հանդիսանալով հանրային շահի դրսևորման ձևերից մեկը, միաժամանակ առանձնանում է պաշտպանության ենթակա շահի կրողով, առարկայով և իրավասու սուբյեկտների շրջանակով:

Այս համատեքստում, պետական շահի բովանդակության և դրա որոշման չափանիշների, ինչպես նաև պաշտպանության իրավասու սուբյեկտների շրջանակի հստակեցման նկատառումով՝ նպատակահարմար է դիտարկել պետական շահի պաշտպանության առանձնահատկությունները հաշվի առնող իրավական կառուցակարգերի կատարելագործման հարցը:

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում է պետական շահի իրավաբանական բնույթը և դրա քաղաքացիադատավարական պաշտպանությունը ՀՀ իրավական համակարգում: Քաղաքացիական դատավարության շրջանակում շահը դիտվում է որպես հիմնարար կատեգորիա, որի վրա է կառուցված ամբողջ դատական պաշտպանությունը, ըստ այդմ հոդվածում ներկայացվում է շահերի դասակարգումն ըստ բնույթի՝ գույքային

և ոչ գույքային, ինչպես նաև դրանց տարբերությունները: Առանձնացվում է պետական շահը՝ որպես հասարակության ամբողջական շահի արտահայտություն, որի պաշտպանությունը պահանջում է հատուկ կառուցակարգեր: Սույն հոդվածի նպատակն է քաղաքացիադատավարական գործընթացում հստակեցնել պետական շահի իրավական սահմանումը՝ դրա բովանդակային կառուցվածքը, գործառույթները և կիրառական նշանակությունը: Այս համատեքստում, հիմնական խնդիրը ձևավորվում է պետական շահի սահմանման և կիրառման ինստիտուցիոնալ ու նորմատիվ բացերի բացահայտումը և վերլուծությունը՝ քաղաքացիադատավարական գործերի շրջանակում:

Annotation. The article observes the legal nature of state interest and its protection within civil proceedings in the legal system of the Republic of Armenia. Within the framework of the civil procedure, interest is regarded as a fundamental category upon which the system of judicial protection is built. The article presents a classification of interests according to their nature into property and non-property interests, as well as the differences between them. The author singles out the state interest as an expression of the collective interest of the society, the protection of which requires special approaches. The article aims at clarifying the legal definition of state interest in the civil procedure process, its substantive structure, functions and significance in application. The study is relevant as the lack of an adequate formulation of state interests leads to legal uncertainty in the RA civil proceedings, which can undermine the effective protection of state interests in court. In this context, the main problem is to identify and analyze institutional and regulatory gaps in the definition and application of the State interests in civil procedure cases.

Аннотация. В статье рассматриваются правовая природа государственного интереса и особенности его защиты в рамках гражданского судопроизводства в правовой системе Республики Армения. В гражданском судопроизводстве интерес рассматривается как фундаментальная категория, на которой основывается система судебной защиты.

В статье представлена классификация интересов по их природе на имущественные и неимущественные, а также раскрываются различия между ними. Автор выделяет государственный интерес как выражение коллективного интереса общества, защита которого требует особого подхода.

Цель статьи заключается в уточнении юридического определения государственного интереса в гражданском процессе, определении его функций и особенностей применения, а также в выявлении правовых проблем, связанных с его защитой в судебной практике Республики Армения.

Актуальность исследования обусловлена тем, что отсутствие надлежащего законодательного определения государственного интереса приводит к правовой неопределённости в гражданском судопроизводстве Республики Армения, что может негативно отразиться на эффективности судебной защиты государственных интересов.

В этом контексте основная проблема исследования заключается в выявлении и анализе институциональных и нормативных пробелов в определении и применении категории государственного интереса при рассмотрении гражданских дел.

Բանալի բառեր *- պետություն, սեփականություն, պետական շահ, հանրային շահ, մասնավոր շահ, գույքային շահ, ոչ գույքային շահ, շահերի հավասարակշռում, իրավունքի պաշտպանություն:*

Keywords: *State, Property, State interest, Public interest, Private interest, Proprietary interest, Non-proprietary interest, Balance of interests, Protection of rights.*

Ключевые слова: *государство, собственность, государственный интерес, общественный интерес, частный интерес, имущественный интерес, неимущественный интерес, баланс интересов, защита.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն [Constitution of the Republic of Armenia].
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք [Civil Code of the Republic of Armenia]. (1998).
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք [Civil Procedure Code of the Republic of Armenia]. (2018).
4. ՀՀ հողային օրենսգիրք [Land Code of the Republic of Armenia].
5. ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1776 որոշում, կետ 406.
6. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ ՀԿԴ/0096/02/24 քաղաքացիական գործով կայացված վճիռ.
7. ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՀԿԴ/0096/02/24 քաղաքացիական գործով կայացված որոշում.
8. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում վարչական գործով թիվ ՎԴ/1621/05/14.
9. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով որոշումը.
10. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում: Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2020, էջ 15.
11. Վ. Հովհաննիսյան, (2019). «Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում». «Բանբեր» թիվ 3 (30), էջ 70:
12. Գ. Հովհաննիսյան, (2020). Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, էջ 323–324:
13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. գիրք առաջին | Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Վ. Հովհաննիսյանի և իրավ. գիտ. թեկն., դոցենտ Ս. Գ. Մեղրյանի խմբագրությամբ, Երևան, 2022
14. Анохин, П. В. (2001). Государственные интересы и права человека: соотношение и приоритеты (Автореф. дис. канд. юрид. наук). Санкт-Петербург, էջ 11:
15. Морозова, Л. А. (1998). Проблемы современной российской государственности. Москва: Юридическая литература, էջ 87–93:
16. Мусаев, Н. М. Понятие интереса, его виды и соотношение публичного и частного интереса.
17. Тихомиров, Ю. А. (1996). Публичное право: падение и взлеты. Государство и право, № 1, էջ 5:
18. Weber, R. (2023). Rechtswörterbuch (30. Aufl.), բառահոդված «Öffentliches Interesse».
19. Benkard, PatG/Kober-Dehm. (2023). Patentgesetz, 12. Aufl., § 24 Rn. 15:
20. Diemer, K. (2023). In KK-StPO, 9. Aufl., § 153a Rn. 12:
21. BGHZ 131, 247, 251; BPatGE 32, 184, 189:
22. BGHZ 131, 247, 254:

Մադոյան Ա. - ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, էլհասցե՝ madoyan.prosecutor@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 14.04.2026 թ., տրվել է գրախոսության 14.04.2026 թ., երաշխավորվել է ի. գ. դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.: